## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

*Սույն թվականի օգոստոս, սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին, Մայր Աթոռի հարազատ որդի և հանրածանոթ մի շարք ազգայիններ, իրենց ազգօգուտ և եկեղեցաշեն գործունեության և սրտագին բարերարությունների համար, ի նշան ճշմարիտ սիրո և հայրապետական բարձր գնահատության, արժանանալով Նորին Ս. Օծության ուշադրության, սեպտեմբերի 10-ի, 15-ի, 20-ի և հոկտեմբերի 7-ի թվակիր սրբատառ կոնդակներով, պարգևատրվել են* Ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի ականակուռ ոսկյա շքանշանով.

*Լոնդոնից, Անգլիայի Հայոց Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Պսակ եպիսկոպոս Թումայանի միջնորդությամբ՝*

*ՄԵԾԱՀԱՐԳ ՏԻԱՐ ՆԵՐՍԵՍ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ, բարերար Մայր Աթոռի.*

*ՄԵԾԱՀԱՐԳ ՏԻԱՐ ՍԱՐԳԻՍ ՔՅՈՒՐՔՃՅԱՆ, բարերար Մայր Աթոռի.*

*ՄԵԾԱՀԱՐԳ ՏԻԱՐ ԱՎԵՏԻՍ ՀԱԿՈԲՅԱՆ, Լոնդոնի Արգարյան հիմնադրամի վարչության անդամ.*

*Եգիպտոսից, Եգիպտահայ թեմի բարեխնամ առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանի միջնորդությամբ՝*

*ՄԵԾԱՀԱՐԳ ՏԻԱՐ ՖԻԼԻՊ ԱՐԳԱՐՅԱՆ, ազգային բարերար.*

*Փարիզից, Հայրապետական պատվիրակ և Փարիզի առաջնորդ գերաշնորհ Տ. Սերովբե եպիսկոպոս Մանուկյանի միջնորդությամբ՝*

*ՄԵԾԱՀԱՐԳ ՏԻԱՐ ԿԱՐԱՊԵՏ ՀԱԿՈԲՅԱՆ, ազգային բարերար.*

*ՄԵԾԱՀԱՐԳ ՏԻԱՐ ԱՐՄԵՆԱԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ, ազգային բարերար.*

*Սան-Պաուլոյից, Հարավային Ամերիկայի Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Ցիրոն արքեպիսկոպոս Մանուկյանի միջնորդությամբ՝*

*ՄԵԾԱՀԱՐԳ ՏԻԱՐ ԱՆԴՐԵԱՍ ՃԱՖԵՐՅԱՆ, ազգային բարերար։*

Նորին Ս. Օծության վեհափառ Հայրապետի օրհնության կոնդակին են արժանացել.

*Օգոստոս 12 թվակիր կոնդակով, Զահլեի (Լիբանան) հայոց հոգևոր հովիվ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՄԱՇՏՈՑ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՈՍԿԵՐԻՉՅԱՆԸ, իր գրական-կրթական 40-ամյա գործունեության և քահանայության 25-ամյակի կապակցությամբ.*

*Կահիրեից (Եգիպտոս), 20 սեպտեմբերի թվակիր կոնդակով, ՏԻԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԳԱՍԱՐՅԱՆԸ։*

*Շնորհավորում ենք Հայրապետական բարձր գնահատության արժանացած պատվական ազգայիններին և մաղթում ավելի արդյունավետ և ազգօգուտ, եկեղեցաշեն գործունեություն, ի պայծառություն Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու և հուրախություն հայ ժողովրդյան։*